

ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ Հ ԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Ծանոթագրություն.

Օրենսդրի կողմից Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքի ընդունմամբ¹ (այսուհետ՝ «Օրենսդրական Փոփոխություն»)՝ 2023 թվականի հունվարի 1-ից Հայաստանում ներդրվել է ֆիզիկական անձնաց եկամուտների հայտարարագրման համակարգ: Հաշվի առնելով Օրենսդրական Փոփոխության շահառուների լայն շրջանակը, ինչպես նաև հիմք ընդունելով դրա մասին իրազեկվածության կարևորությունը՝ սույն հարց և պատասխանի շրջանակներում փորձել ենք հակիրճ և հասկանալի կերպով ներկայացնել Օրենսդրական Փոփոխություններով ֆիզիկական անձանց համար առաջացող պարտավորությունների էությունը:

1. Օրենսդրական Փոփոխությունների արդյունքում ո՞վքեր կունենան եկամուտների հայտարարագրման պարտավորություն:

Օրենսդրական փոփոխության վերջնական նպատակը ՀՀ ռեզիդենտ բոլոր քաղաքացիների համար եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտավորության սահմանումն է: Սակայն, մինչ 2025 թվականը եկամուտների հայտարարագրման պարտավորությունը կտարածվի միայն որոշակի չափանիշների համապատասխանող ֆիզիկական անձանց վրա:

2. Ո՞վքեր են համարվում ՀՀ ռեզիդենտ:

Ֆիզիկական անձը համարվում է ՀՀ ռեզիդենտ, եթե օրացույցային տարվա ընթացքում (տվյալ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում) 183 և ավելի օր գտնվել է ՀՀ-ում:

¹ ՀՕ-593-Ն

3. Ո՞ր կատեգորիայի անձինք հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեն 2023 թվականի հաշվետու տարվա համար:

2023 թվականին եկամուտների հատարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեն հետևյալ ֆիզիկական անձինք՝

Չափանիշը	Այլ նշումներ (առկայության դեպքում)
<p>2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի քաղաքացիները,</p>	<p>Սույն չափանիշի շրջանակներում ՀՀ ռեզիդենտ լինելու փաստին նշանակություն չի տրվում:</p>
<p>Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի քաղաքացիները, որոնք 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայտեր, անդամ),</p>	<p>Սույն չափանիշի շրջանակներում կարևորվում է երկու փաստի միաժամանակյա առկայությունը՝</p> <ul style="list-style-type: none"> • Ընկերությունը, որում բաժնետեր է հանդիսանում ռեզիդենտ ֆիզիկական անձը, 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավելի համախառն եկամուտ է հայտարարագրել, • 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ ֆիզիկական անձը դեռևս հանդիսանում է տվյալ ընկերության բաժնետեր, փայտեր կամ անդամ:
<p>Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,</p>	<p>Իրական շահառու են համարվում այն ֆիզիկական անձինք ովքեր՝</p> <ul style="list-style-type: none"> • ուղղակի կամ անուղղակի տիրապետում են իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում, • տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով, • հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ նախորդող երկու ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

<p>Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի քաղաքացիները, որոնք 2023 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն:</p>	
---	--

4. Ե՞րբ ֆիզիկական անձինք պետք է ներկայացնեն 2023 թվականի հաշվետու տարվա համար եկամուտների հայտարարագրերը:

2023 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համար եկամուտների հայտարարագրերը ֆիզիկական անձինք պետք է ներկայացնեն մինչև 2024 թվականի մայիսի 1-ը:

5. Ի՞նչ ձևով պետք է ներկայացվեն եկամուտների հայտարարագրերը:

Եկամուտների հայտարարագրերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային ձևով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին: Ներկայումս ՀՀ կառավարության կողմից մշակվում է ֆիզիկական անձանց հարկային մարմնում հաշվառման կարգ:

Ծանուցում: Այստեղ ներկայացված մտքերը ունեն տեղեկատվական բնույթ և չեն հանդիսանում իրավաբանական խորհրդատվություն:

Գոհար Թովմասյան
 Իրավախորհրդատու, փաստաբան
gtovmasyan@tk.partners

